# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
## ՆԱԽԱԳԱՀ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ա. ԲԱԲԼՈՅԱՆԻՆ

*Հարգելի պարոն ԲԱԲԼՈՅԱՆ.*

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի հիման վրա տեղեկացնում եմ, որ ՀՀ Սահմանադրության (2005թ. փոփոխություններով) 117-րդ հոդվածի 13-րդ կետի. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ինչպես նաև նույն հոդվածի 2-րդ մասի հիմքերով 2018 թվականի փետրվարի 01-ից դադարում են ՀՀ սահմանադրական դատարանի անդամ Կիմ Բալայանի լիազորությունները:

Պարոն Կիմ Բալայանը ՀՀ սահմանադրական դատարանի անդամ է նշանակվել ՀՀ Ազգային Ժողովի կողմից:

ՀՀ սահմանադրական դատարանի
նախագահ Գ. Հարությունյան

31 հունվարի 2018թ.

ՍԴՆ - 3

Մուտք հ. 988-18
«31» 08 2018թ.
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

0019, Երևան, Բաղրամյան 10, հեռ. (374.10) 52 67 64 (ֆաքս), E-mail: armlaw@concourt.am

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ**

---

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՆԴԱՄ ՊԱՐՈՆ ԿԻՄ ԲԱԼԱՅԱՆԻ՝ 2018Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 1-ԻՑ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 117-րդ հոդվածի 13-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 3-րդ հոդվածի պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանը փաստում է, որ 2017թ. հոկտեմբերի 15-ին լրացել է ՀՀ սահմանադրական դատարանի անդամ պարոն Կիմ Բալայանի պաշտոնավարման տարիքը: Սակայն պարոն Կիմ Բալայանը պաշտոնավարման տարիքը լրանալու պահին մասնակցել է գործի դատաքննությանը և տվյալ գործով զեկուցող է եղել մինչև 2018թ. հունվարի 30-ը:

ՀՀ սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

Արձանագրել, որ 2018թ. փետրվարի 1-ից դադարում են ՀՀ սահմանադրական դատարանի անդամ պարոն Կիմ Բալայանի լիազորությունները և նրա տեղը համարվում է թափուր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

30 հունվարի 2018 թվականի
ՍԴԱՈ-6